

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

_____ Տ. Դավթյան

_____ Գ. Խաչատրյան

16 դեկտեմբերի 2010 թ.

N 30

Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն ՈՒ Մ

ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԼՈՒԾԱՐՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՉԱՍՈՐՏԻԶԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (30 սեպտեմբերի 1997 թվական, ՀՕ-155, այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի (Շահութահարկի հաշվարկման ընդհանուր հիմքը) 1-ին մասի համաձայն շահութահարկը որոշելիս հաշվառումն իրականացվում է հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունները կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված սկզբունքների և կանոնների հիման վրա, եթե Օրենքով չեն նախատեսվում դրանց կիրառման առանձնահատկությունները: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն հարկվող շահույթը որոշելիս ակտիվները հաշվի են առնվում սկզբնական (ձեռքբերման) արժեքով (բացառությամբ՝ օրենքով սահմանված կարգով իրականացված վերագնահատման արդյունքների):

1) Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, Օրենքի իմաստով՝

- ակտիվ է համարվում հարկ վճարողին սեփականության իրավունքով պատկանող ցանկացած միջոցը՝ գույքը (նյութական ակտիվները), գույքային իրավունքները և գույքային իրավունքները (ոչ նյութական ակտիվները), արտարժույթը, արժեթղթերը, դեբիտորական պարտքը և այլ գույքը («գ» կետ),

- պարտավորություն է համարվում հարկ վճարողի առկա պարտքը՝ վարկ, կրեդիտորական պարտք, հարկային պարտավորություն և այլն («դ» կետ),

- սեփական կապիտալ է համարվում ակտիվների և պարտավորությունների տարբերությունը («բ» կետ):

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն Օրենքի իմաստով եկամուտ է համարվում հաշվետու տարվա ընթացքում ակտիվների ներհոսքը, աճը կամ պարտավորությունների նվազումը, որոնք հանգեցնում են հարկ վճարողի սեփական կապիտալի ավելացմանը: Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն Օրենքի իմաստով ծախս է համարվում հաշվետու տարվա ընթացքում ակտիվների արտահոսքը, նվազումը կամ պարտավորությունների աճը, որոնք հանգեցնում են հարկ վճարողի սեփական կապիտալի (այսինքն՝ ակտիվների և պարտավորությունների տարբերության) նվազեցման:

Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է դրա ստացման հետ կապված անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չափով, իսկ Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է գործունեության մեջ օգտագործվող և մաշվածքի ենթակա հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումների գումարի չափով:

2) Հաշվապահական հաշվառման ստանդարտ 16-ը (Հիմնական միջոցներ, այսուհետ՝ Ստանդարտ) անդրադառնում է հիմնական միջոցների հաշվառմանը հետևյալ ձևով՝

- հիմնական միջոցը ճանաչվում է որպես ակտիվ, երբ ակնկալվում է, որ դրա հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի կազմակերպություն, և դրա արժեքը կարող է արժանահավաստորեն չափվել,

- հիմնական միջոցը, որը համապատասխանում է ակտիվի ճանաչման չափանիշներին, պետք է սկզբնապես չափվի իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ Ստանդարտը նախատեսում է հիմնական միջոցի սկզբնական ճանաչմանը հաջորդող չափումներ (այդ թվում՝ վերագնահատումներ, օգտակար ծառայության վերանայում, մաշվածության հաշվարկման մեթոդի վերանայում, արժեզրկումից կորուստներ),

- հիմնական միջոցը պետք է հանվի հաշվապահական հաշվեկշռից, երբ այն իրացվում կամ, երբ ընդմիջտ դուրս է հանվում օգտագործումից, և ապագա ոչ մի տնտեսական օգուտ չի ակնկալվում նրա իրացումից, ընդ որում՝ հիմնական միջոցի դուրսգրումից կամ իրացումից առաջացած արդյունքը պետք է որոշվի որպես ակտիվի իրացումից գուտ մուտքերի (հասույթի) և հաշվեկշռային արժեքի տարբերություն, և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում պետք է ճանաչվի որպես եկամուտ կամ ծախս,

- հիմնական միջոցը, որը հանվում է օգտագործումից և պահվում է իրացնելու նպատակով, հաշվառվում է ակտիվը օգտագործումից հանելու պահին առկա հաշվեկշռային արժեքով և առնվազն կազմակերպությունը պարբերաբար որոշում է՝ ակտիվը արժեզրկվել է, թե՛ ոչ, և ճանաչում է համապատասխան արժեզրկման կորուստները:

Հիմնական միջոցների լուծարման դեպքում նշված դրույթների կիրառման հետ կապված հարցերի ճշտման նպատակով՝ ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասով, ***պաշտոնապես պարզաբանում եմ.***

1. Շահութահարկով հարկման նպատակով սեփականության իրավունքով ձեռք բերված հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական (արժեքով), իսկ Ստանդարտին համապատասխան հիմնական միջոցի միավորի սկզբնական ճանաչմանը հաջորդող չափումները հաշվի չեն առնվում (այսինքն՝ տվյալ հիմնական միջոցը շարունակվում է հաշվառվել սկզբնական /ձեռքբերման/ արժեքով՝ հաշվի առած մաշվածությունը): Ընդ որում՝ նշված չափումներից հաշվապահական հաշվառման տեսանկյունից առաջացող եկամուտները կամ ծախսերը շահութահարկով հարկման նպատակով հաշվի չեն առնվում (այսինքն՝ չեն համարվում որպես եկամուտ կամ նվազեցում):

2. Շահութահարկով հարկման նպատակով հիմնական միջոցի դուրսգրումը հաշվի չի առնվում (այսինքն՝ տվյալ հիմնական միջոցը շարունակվում է հաշվառվել սկզբնական /ձեռքբերման/ արժեքով՝ հաշվի առած մաշվածությունը)՝ անկախ այն հանգամանքից, թե հարկ վճարողը տվյալ հիմնական միջոցից ակնկալում է, թե չի ակնկալում տնտեսական օգուտներ, քանի դեռ տվյալ հիմնական միջոցը պատկանում է հարկ վճարողին սեփականության իրավունքով:

3. Շահութահարկով հարկման նպատակով դուրս գրված հիմնական միջոցի ոչնչացման կամ որպես այլ նշանակության գույք վաճառելու (կամ օգտագործելու) դեպքում տվյալ հիմնական միջոցի չամորտիզացված արժեքը համախառն եկամտից նվազեցման ենթակա չէ:

4. Շահութահարկով հարկման նպատակով հիմնական միջոցի լուծարման արդյունքում հետագա օգտագործման կամ վաճառքի համար առանձնացված ընթացիկ նյութական ակտիվների (նյութեր, դետալներ, պահեստամասեր, բլոկներ և համանման այլ մասեր) կամ այլ ոչ ընթացիկ նյութական ակտիվների սկզբնական (ձեռքբերման) արժեքը որոշվում է տվյալ հիմնական միջոցի սկզբնական (ձեռքբերման) արժեքի ձևավորման ժամանակ այդ հիմնական միջոցի սկզբնական արժեքի մեջ նշված ակտիվների արժեքների տեսակարար կշիռներից ելնելով, որոնք կիրառվում են տվյալ հիմնական միջոցի՝ հարկային հաշվառման նպատակով որոշված մնացորդային արժեքի նկատմամբ